ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 21-ին

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 20. Ռազմական ոստիկանության ծառայողի պատասխանատվությունը

1. Իր առջև դրված պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև այլ իրավախախտումների համար ռազմական ոստիկանության ծառայողը ենթակա է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

2. Ռազմական ոստիկանության ծառայողի հակաօրինական գործողության կամ անգործության հետևանքով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքով սահմանված կարգով:

3. Ռազմական ոստիկանության ծառայողների անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել վերադասության կամ դատական կարգով:

4. Ռազմական ոստիկանության ծառայողին արգելվում է մասնակցել «Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքով նախատեսված խաղային գործունեության շրջանակում կազմակերպվող խաղերին, բացառությամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում մասնակցության դեպքերի: